# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

«14» հուլիսի 2023թ. N ՄՈ/272-Ա

ք. Արմավիր

**«ԱՐՏԱՄԵՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԵԼՔՈՆ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Մելքոն Ղազարյանի 2023 թվականի հուլիսի 12-ի դիմումը.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. «Արտամետի Գուրգեն Մարգարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մելքոն Ղազարյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը 2023 թվականի հուլիսի 17-ից օգոստոսի 18-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Մելքոն Ղազարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արտամետի Գուրգեն Մարգարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Արտամետի Գուրգեն Մարգարյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցչուհի Դիանա Իսահակյանին:
3. «Արտամետի Գուրգեն Մարգարյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցչուհի Դիանա Իսահակյանի աշխատավարձի վճարումը 2023 թվականի հուլիսի 17-ից օգոստոսի 18-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Մելքոն Ղազարյանին աշխատանքի մեջ համարել 2023 թվականի օգոստոսի 21-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 14.07.2023 10:06:25 GMT+4

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

**Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**